

- Աստուծոց կը խնդրեմ, գիւ անմախ ըննս.
Քիւ ժառանգ դիւս չըննր.
Քիւ տեղն էլ քեարք մէջ ըննր.
Դիւ քիւ աչքեով ախշար չը տիսնաս.
Որ դիւ ախշար տիսնաս, ախշար տաւրիս:
353. Խանտիւթ կը տիսնայ Դաւիթ չուրցաւ.
Ձեռ կտայ վուր զԴաւիթ խանի.
Տիսնայ, մէջք, յըմեն ուսկուր ջարդըուեր ի:
354. Խանտիւթ կը թուղնը զԴաւիթ, կը շնչի դախ Մհեր.
Մհերն էլ չկայ, Մհեր կուրսըուեր ի վերեէն.
Կըննը զԴաւիթ խանի,
Կերթայ, մէկ մէկ զաղբէրքեր կը բերի.
Տէրտէրքեր, իշխանքտիւր կը բերի,
Տեղ կտայ վուրիւ. յըմեն էլ կտայ խուրիւ.
Էդա Դաւթը վուսկիք կը խարճի.
Աղէկ ժամ, պատարագ էտե կէնի, զիննն էլ խաց չուտի.
Կըսի.— Աստուած քեակի Սասուն:
355. Կըռըկի, զիւր ձին կը խիծնի.
Յալմ, Խոյ, դիւր իս, էկայ քի խամար:
Սասուն էն աւիրն էր վուր աւիրուաւ: